

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կողմից անցկացված ծառայողական քննությունների վերաբերյալ

N	Ծառայողական քննության անցկացման հիմքը	Ծառայողական քննության անցկացման նպատակը	Ծառայողական քննության նշանակումը /մերժումը՝ հիմնավորմամբ/	Ծառայողական քննության արդյունքը
1.	<p>ՀՀ բնապահպանության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Վայոց ձորի տարածքային բաժնի պետ Վահիկ Գրիգորյանի 2016 թվականի դեկտեմբերի 5-ի դիմումի կապակցությամբ՝ իր նկատմամբ կիրառված կարգապահական տույժի հիմնավորվածությունը պարզելու մասին</p>	<p>Պարզել Վ. Գրիգորյանի նկատմամբ կիրառված՝ Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով նախատեսված «խիստ նկատողություն» կարգապահական տույժի հիմնավորվածությունը</p>	<p>Նախարարության աշխատակազմում ծառայողական քննությունը նշանակվել է Խորհրդի 2017 թվականի հունվարի 10-ի N 4-Ա որոշմամբ</p>	<p>Խորհրդի 2017 թվականի փետրվարի 22-ի N 131-Ա որոշմամբ Նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Վայոց ձորի տարածքային բաժնի պետ Վ. Գրիգորյանի 2016 թվականի դեկտեմբերի 5-ի դիմումը հիմնավոր չի համարվել:</p>
2.	<p>ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտեի) աշխատակազմի ղեկավարի 2017 թվականի մայիսի 22-ի դիմումի և մայիսի 29-ի լրումն դիմումների կապակցությամբ Կոմիտեի աշխատակազմի «Լիցենզավորման կենտրոն» գործակալության լիցենզավորման բաժնի գլխավոր մասնագետ Գոռ Մաղաքյանի նկատմամբ Օրենքի</p>	<p>Պարզել Գ. Մաղաքյանի կողմից կարգապահական խախտում կատարելու հիմնավորվածությունը</p>	<p>Կոմիտեի աշխատակազմում ծառայողական քննությունը նշանակվել է Խորհրդի 2017 թվականի հունիսի 6-ի N 470-Ա որոշմամբ</p>	<p>Խորհրդի 2017 թվականի հուլիսի 7-ի N 555-Ա որոշմամբ Կոմիտեի աշխատակազմի ղեկավարի դիմումները հիմնավոր են համարվել և համաձայնություն է տրվել Գ. Մաղաքյանի նկատմամբ կիրառելու Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով նախատեսված</p>

	32-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով նախատեսված՝ զբաղեցրած պաշտոնից ազատում կարգապահական տույժ կիրառելու համաձայնություն ստանալու մասին			կարգապահական տույժը:
--	--	--	--	----------------------

23 հոկտեմբերի 2017 թ.